



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՐԿԱ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ՀԵՂԻՆԱԿ

ԷԼՄԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՐԶ

ԿՈՏԱՅՔ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱԶԴԱՆԻ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ

ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն -----	3
Ֆինանսական կրթության կարևորությունը -----	4-15
Եզրակացություն -----	16
Գրականություն -----	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակաշրջանում յուրաքանչյուր անձ առօրյայում և կենսագործունեության տարբեր ոլորտներում շարունակ առնչվում է ֆինանսական խնդիրների, որոնց թվում առավել մեծ կենսական նշանակություն ունեն հատկապես անձնական ֆինանսների կառավարմանը վերաբերող խնդիրները : Դրանք արդյունավետ լուծելու համար պահանջվում է ունենալ ֆինանսական գրագիտության բավարար մակարդակ, ինչը կարող է ձեռք բերվել միայն նպատակային կրթական ծրագրերի շնորհիվ :

Ֆինանսական կրթության այն ծրագրերը , որոնք , լինելով ողջ կյանքի ընթացքում անձի համար համապիտանի կարողությունների ձևավորման միջոց , վերաբերում են հանրության բոլոր անդամներին և աստիճանական զարգացում են ունենում որպես շարունակական գործընթաց : Այդ գործընթացի առանցքային և հիմնական օղակներից մեկը հանրակրթական դպրոցն է, որտեղ հնարավոր է անձի զարգացման վաղ տարիքից ներդնել անձնական ֆինանսները կառավարելու սովորություն , այն դարձնել կենսակերպի անբաժանելի մաս և ձևավորել որպես մշակույթ :

Հետազոտական աշխատանքիս հիմնական նպատակն է բացահայտել ֆինանսական կրթության կարևորությունը, որի ինտեգրումը մաթեմատիկայի դպրոցական դասընթացում կնպաստի ֆինանսապես գրագետ անձի ձևավորմանը : Ֆինանսական կրթությունը շեշտադրում է բազային նվազագույն անհրաժեշտ կարողություններ, որոնք կօգնեն սովորողներին հետագայում ճիշտ կողմնորոշվելու դինամիկ զարգացող ֆինանսական աշխարհում : Միաժամանակ սովորողների մոտ անհրաժեշտ ֆինանսական գիտելիքներ , հմտություններ և վերաբերմունք ձևավորելը, զարգացնելը նրանց կօգնի հետագայում պատասխանատու ֆինանսական որոշումների կայացմանը :

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հանրակրթական ծրագրերի բովանդակության մեջ ֆինանսներին վերաբերող գիտելիքների ներառումը, իր հերթին, խթան կհանդիսանա նաև մեծահասակների (ուսուցիչների, ծնողների և այլն) ֆինանսական գրագիտության բարելավման համար, և արդյունքում բարենպաստ միջավայր կստեղծվի հանրային կյանքում անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ դրական վերաբերմունք ձևավորելու առումով:

Հանրակրթական դպրոցներում ֆինանսական կրթության իրականացման արդյունավետ ուղիներից է միջառարկայական ինտեգրումը, երբ ֆինանսներին վերաբերող բովանդակային նյութը ներառվում է ուսումնական առարկաներից մի քանիսի ծրագրերում: Ինտեգրման մոտեցումը հնարավորություն է տալիս ֆինանսների կարևորությունը լուսաբանելու ուսումնական տարբեր առարկաներում դիտարկվող իրավիճակների վերլուծության, օրինակների պարզաբանման և խնդիրների լուծման ընթացքում չավելացնելով դասաժամային ծանրաբեռնվածությունը: Այդ տեսակետից առանձնահատուկ հնարավորություններ ունի մաթեմատիկայի դպրոցական դասընթացը, քանի որ այն, ունենալով շարունակական ընթացք, բոլոր տարիքային խմբերի սովորողների համար կարող է դիտարկել ֆինանսներին վերաբերող իրավիճակներ, հարցեր և խնդիրներ: Ընդ որում՝ այդպիսի ինտեգրումը բարենպաստ կլինի նաև հենց մաթեմատիկական կրթության խնդիրների իրականացման առումով, ֆինանսներին վերաբերող հարցերի շնորհիվ կամրապնդվի մաթեմատիկական կրթության բովանդակության կապն իրական կյանքի հետ, մաթեմատիկական վերացական հասկացություններն ու առնչությունները կփոխադրվեն կիրառական ոլորտ՝ նպաստելով ուսումնական նյութի ընկալմանն ու սովորողների հետաքրքրության բարձրացմանը:

Հարկ է նկատել, որ մինչ այժմ մաթեմատիկայի դպրոցական դասընթացում շատ տարերային և անկազմակերպ ձևով է շոշափվել սովորողների ֆինանսական գրագիտությանը նպաստելու հարցը, ըստ էության, այդպիսի կրթական խնդիր չի եղել դրվել, մեթոդական նյութերում և ձեռնարկներում դրա վերաբերյալ հարցադրումներ կամ ցուցումներ չեն եղել, ուստի և չի օգտագործվել մաթեմատիկական կրթության այն հսկայական ներուժը, որը հնարավորություն կընձեռներ խորությամբ բացահայտելու

ուսումնական առարկայի կիրառական նշանակությունը՝ ապահովելով կրթության բովանդակության կապը սովորողների կրթական կարիքների հետ : Դրա հետևանքով աշակերտները դպրոցն ավարտելիս ոչ միայն չեն կարողանում կայացնել պատասխանատու որոշումներ իրենց անձնական ֆինանսների վերաբերյալ, այլև անհրաժեշտ գիտելիքներ չունենալու պատճառով հետագայում լուրջ դժվարությունների են հանդիպում :

Հանրակրթության մեջ ֆինանսական կրթության ներառումը միտված է տեղեկացված լինելու , անձնական ֆինանսների վերաբերյալ պատասխանատու որոշումներ կայացնելու և իրավիճակին համապատասխան ճիշտ գործողություններ ձեռնարկելու հնարավորություն ընձեռնող գիտելիքներ, հմտություններ և վերաբերմունք ունեցող , ֆինանսապես գրագետ անձի ձևավորմանը նպաստելուն , ինչպես նաև՝ ուսուցիչների , ծնողների ֆինանսական գրագիտության բարելավմանը , անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ հանրային կյանքում դրական վերաբերմունքի դրսևորմանը խթանելուն :

Անձնական ֆինանսների վերաբերյալ որոշումներ կայացնելու և իրավիճակին համապատասխան գործողություններ ձեռնարկելու համար անձից պահանջվում է որոշակի ինքնավստահություն, որը կարող է դրսևորվել միայն հիմնավոր հաշվարկների ու համակողմանի վերլուծությունների առկայության դեպքում : Եվ հենց դա է այն հանգուցային խնդիրը , որի շուրջ միավորվում են մաթեմատիկական և ֆինանսական կրթությունները :

Մաթեմատիկական կրթության բովանդակության մեջ ֆինանսական բովանդակությամբ հարցերի ներառումը նաև նպատակ ունի բարենպաստ ներգործություն ունենալու << Մաթեմատիկա >> ուսումնական բնագավառի կրթական խնդիրների արդյունավետ լուծման վրա : Մաթեմատիկական գրագիտություն ունենալու առանցքային կարողունակությունն ենթադրում է տարբեր իրադրություններում մաթեմատիկական գիտելիքներ ու մեթոդներ կիրառելու կարողություն : Ֆինանսներին առնչվող իրավիճակներն ունեն այն առանձնահատկությունը , որ դրանք վերաբերում և հետաքրքրում են բոլորին, ուստի մաթեմատիկայի ուսուցման ընթացքում դրանց դիտարկման շնորհիվ բարենպաստ իրադրություն է ստեղծվում մաթեմատիկայի ուսուցման ընթացքում գործնական ու հետազոտական աշխատանքների կատարման համար, բարենպաստ պայմաններ են առաջանում ուսումնական այնպիսի

աշխատանքների համար , որոնք ծառայում են սովորողների դաստիարակության և սոցիալական հմտությունների զարգացման նպատակին :

Ֆինանսական գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և վարքագծի այն տարրերը, որոնք ինտեգրված ձևով կներառվեն << Մաթեմատիկա >> ուսումնական բնագավառի բովանդակության մեջ , մաթեմատիկայի առարկայական ծրագրերի կառուցվածքայնացման էական փոփոխություններ չեն պահանջում : Մաթեմատիկայի առարկայական ծրագրերում ֆինանսական գիտելիքների ձեռքբերման համար , ինչպես նաև ֆինանսների կառավարման կարողությունների ձևավորման նպատակով ստեղծվում են ֆինանսական ոլորտի այնպիսի իրավիճակներ, օրինակներ, խնդիրներ, որոնց վերլուծությունը, լուսաբանումը և լուծումն անմիջական առնչություն ունեն ուսուցանվող մաթեմատիկական նյութի բովանդակության և կիրառությունների հետ :

Մաթեմատիկական նյութի բովանդակության մեջ ներառված են ֆինանսների վերաբերող այնպիսի հարցեր ու խնդիրներ, որոնք համահունչ են մաթեմատիկական մտածելակերպին, մաթեմատիկայի դասավանդման մեթոդի և մաթեմատիկական ապարատի կիրառությանը : Մաթեմատիկայի դասընթացը նպաստավոր է սովորողի այնպիսի որակների ձևավորման համար, որոնց շնորհիվ նա կկարողանա թի գիտելիքներն ու հմտությունները օգտագործել անձնական և ընտանեկան բյուջեի արդյունավետ կառավարման, խնայողությունների կատարման և երկարաժամկետ պլանավորման, պարտքերի արդյունավետ կառավարման, արդյունավետ գնումների իրականացման , ֆինանսական ծառայություններից օգտվելիս տեղեկությունների հավաքագրման, համեմատման և պատասխանատու որոշումների կայացման, ֆինանսական համակարգում և շուկայում առաջարկվող ծառայություններից օգտվելու ռիսկերի գնահատման նպատակով :

Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ֆինանսական կրթության ինտեգրումը չպետք է ավելորդ ծանրաբեռնվածություն առաջացնի սովորողների համար, դասավանդման տեսանկյունից լինի հետաքրքիր և դյուրըմբռնելի, ձևավորի փողի և անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ դրական վերաբերմունքի, որպես սպառողի սեփական իրավունքների պաշտպանության, կարիքների, պահանջների և հնարավորությունների ներդաշնակցման, զեղծարարությունից ու խարդախությունից խուսափելու ունակություն, որոնք դրսևորում են վերաբերմունքի և վարքագծի միջոցով : Անհրաժեշտ է ֆինանսների վերաբերյալ տեղեկատվությունը մատուցել փոքր

չափաբաժիններով, ներկայացնել պարզ, մատչելի և գրավիչ ձևերով՝ խուսափելով տվյալ տարիքի երեխայի կյանքին չառնչվող տեղեկատվություն հաղորդելու գայթակղությունից :

Շարունակականության ապահովումն անհրաժեշտ է, որպեսզի ֆինանսներ կառավարելու սովորությունն առաջանա անձի զարգացման վաղ տարիքից, աստիճանաբար ձևավորվի որպես մշակույթ և ուղեկցվի ու զարգանա ողջ կյանքի ընթացքում : Այդ առումով կարևոր է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար, նրանց հնարավորություններին համապատասխան, կատարվի ծրագրի և ուսումնական նյութի պարզեցում և հարմարեցում :

Մաթեմատիկական նյութի բովանդակության մեջ ֆինանսներին վերաբերող նյութը ներառում և ներկայացվում է այնքան սահուն և ներդաշնակ, որ դրանք չեն դիտվում որպես տարբեր բաղադրիչներ, որոնք արհեստականորեն միավորվեն մի դասի մեջ :

Արդյունավետ ուսուցում իրականացնելու համար հարկավոր է գործածել բազմազան մեթոդներ : Ժամանակակից մանկավարժության մոտեցումների համաձայն՝ մեթոդի ընտրության վրա ազդող գործոնները բազմաթիվ են, կախված մասնավորապես, սովորողների տարիքից, կրթական նպատակներից, նյութի բովանդակությունից, առկա պաշարներից և այլն : Այդ տեսանկյունից լավագույն մեթոդներից մեկը, որն առավել լիարժեք է համապատասխանում մաթեմատիկայի դասապրոցեսում ֆինանսական կրթություն իրականացնելու նպատակին, խնդրակենտրոն ուսուցումն է : Այս դեպքում դիտարկվում է ուսումնական թեմային համապատասխանող մաթեմատիկական այնպիսի խնդիր, որի համատեքստը ներկայացնում է ֆինանսներին վերաբերող իրադրություն. Օրինակ՝ թվաբանական գործողությունների հատկությունների ուսուցման ժամանակ դիտարկվում է գնումներին վերաբերող իրադրություն, կամ՝ բնական ցուցիչով աստիճանի ուսուցման ժամանակ դիտարկվում է երկարաժամկետ ավանդի վերաբերյալ իրադրություն : Խնդրի տվյալներն ընկալելու, իրադրությունը վերլուծելու և խնդրի պահանջը գտնելու ընթացքը ծավալվում է այնպես, որ առաջանում է ֆինանսական որևէ գիտելիքի իմացության և կիրառության անհրաժեշտություն : Յուրաքանչյուր դասարանի համար գործածվում է թեմատիկ պլանից բխող և նախապես մշակված այնպիսի խնդիրների համակարգ, որոնց շուրջ իրականացվում է ֆինանսական գիտելիքների ընդլայնումն և խորացումը :

Խնդրակենտրոն ուսուցման մեկ այլ դրսևորում պետք է համարել մաթեմատիկական նյութի պարզաբանումն այնպիսի օրինակի միջոցով, որում արտացոլված է ֆինանսական ոլորտին վերաբերող որևէ իրադրություն կամ հասկացություն. օրինակ՝ շրջանաձև տրամագրի պարզաբանումն անձնական կամ ընտանեկան բյուջեի օրինակով, կամ՝ տոկոսի պարզաբանումն ապրանքի գնի աճի միջոցով:

Մաթեմատիկայի դասընթացում ֆինանսական կրթության իրականացումը չպետք է սահմանափակվի միայն դասաժամի ընթացքում լուսաբանող օրինակներով, ուսուցանող խնդիրներով և վարժություններով: Դասավանդումը ուղեկցվում է տարբեր խաղերով, գործնական աշխատանքներով, թեստերով, խմբային քննարկումներով և այլ ակտիվ մեթոդներով, որոնք խթանում են սովորողի ինքնադրսևորումը, ինքնակազմակերպումը, իրավիճակին համապատասխան կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու ունակությունը: Թեմայի առանձնահատկությունից կախված, հանձնարարվում է կարճաժամկետ և երկարաժամկետ ուսումնասիրություն պահանջող գործնական, հետազոտական և նախագծային աշխատանքներ, որոնք հնարավորություն են տալիս անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելու, դիտումներ և վերլուծություններ կատարելու, ստեղծագործական մոտեցումներ ցուցաբերելու, հետազոտության արդյունքները պատշաճ մակարդակով ներկայացնելու կարողությունների զարգացում, իսկ անձնական ֆինանսների կառավարման մշակույթ ձևավորելու գործում դժվար է գերազնահատել ֆինանսական կազմակերպություններ կատարվող այցելությունների, էքսկուրսիաների, հսկիչ գնումների իրականացման, ստուգատեսների անցկացման և այլ միջոցառումների կազմակերպման կարևորությունը: Մասնավորապես այդ մասին է փաստել ֆինանսական բաղադրիչի ինտեգրմամբ իրականացված՝ 6-րդ դասարանի <<Մասեր, տոկոսներ, հարաբերություններ >> մաթեմատիկական թեմայի ուսուցման դասը, որի համար, ինչպես ներկայացնում ենք ստորև, ի հավելումն մաթեմատիկականի, սահմանել ենք նաև ֆինանսական նպատակներ՝ **խմանալ** ի՞նչ է տոկոսադրույքը, վարկը, ավանդը, զեղչը, խնայողությունը, փողը, **գաղափար ունենալ** վարկ վերցնելու և ավանդ ներդնելու մասին, **գիտենալ** տոկոսադրույքի տեսակները, **կարողանալ** ճիշտ կատարել արդյունավետ գնումներ, ստուգել հայտարարված զեղչերի իրական և ձեռնտու լինելը: Անհերքելի է նաև, որ դասի ընթացքում կազմակերպված դերային խաղերի և խմբային աշխատանքի ժամանակ մեր մեծերի դիմանկարներով

կոմպոզիտային թղթադրամների միջոցով << զեղչեր հայտարարած խանութներում գնումներ >> և << ներկայացված բանկերում բանկային տարբեր գործառույթների >> իրականացման արդյունքում ընդլայնվել է աշակերտների ճանաչողական մտահորիզոնն ու ֆինանսական կրթության իմացության մակարդակը, ձևավորել անձնական և ընտանեկան բյուջեի արդյունավետ կառավարման հմտություններ, վարկերից ու պարտքերից հնարավորինս զերծ մնալու կամ խելացիորեն օգտվելու վերաբերմունք ու վարքագիծ, և , հետևաբար, ֆինանսական կրթությունն այլևս պետք է դիտել որպես հասարակական- պետական պատվեր՝ ուղղված հանրակրթության մարտահրավերների հաղթահարմանը :

Փող- ակտիվի տեսակ, սովորաբար արժույթ , որ կարող է փոխանակվել ապրանքների և ծառայությունների դիմաց՝ հանդես գալով որպես վճարման միջոց :

Ակտիվ – անհատի, ձեռնարկության կամ պետության կողմից տիրապետվող ռեսուրս, որից ապագայում ակնկալվում է ստանալ հավելյալ օգուտ :

Կանխիկ – փողը մետաղադրամների կամ թղթադրամների տեսքով , որը հնարավոր է տեսնել և շոշափել :

Անկանխիկ – փող, որը կատարում է նույն գործառույթները, սակայն տեսանելի կամ շոշափելի չէ :

Բարտեր – առևտրի ձև, որը հիմնականում տեղի է ունենում ապրանքափոխանակու – թյան ձևով, այսինքն՝ ապրանքի դիմաց վճարում կատարվում է մեկ այլ ապրանքի միջոցով :

Վճարում – վճարումը ապրանքների, ծառայությունների, գումարի տրամադրումն է այլ ապրանքներ, ծառայություններ ձեռք բերելու դիմաց :

Փողի պաշտպանական հատկանիշներ – մետաղադրամի կամ թղթադրամի այն առանձնահատկությունները, որոնք հնարավոր չէ կեղծել :

Բանկ – ֆինանսական կազմակերպություն, որը Կենտրոնական բանկի տված լիցենզիայի հիման վրա ներգրավում է ավանդներ և տեղաբաշխում է վարկեր, իրականացնում այլ գործառույթներ՝ քարտերի սպասարկում, դրամական փոխանցում – ներ, տարադրամի փոխանակում և այլն :

Կենտրոնական բանկ – ֆինանսական համակարգը կարգավորող և վերահսկող կառույց :

Բանկային հաշիվ – բանկում համապատասխան պայմանագրով հաճախորդի բացված

հաշիվն է, որի միջոցով իրականացվում են գումարի մուտքագրումներ, փոխանցումներ, կանխիկացումներ և այլ ֆինանսական գործառնություններ :

Վճարային քարտ – ժամանակակից վճարային գործիք է, որը հնարավորություն է տալիս քարտատիրոջը , առանց բանկ այցելելու, տնօրինելու բանկային հաշվին առկա միջոցները՝ վճարել ապրանքների և ծառայությունների դիմաց, գումարներ փոխանցել այլ անձանց, քարտերին (քարտային հաշիվներին), ինչպես նաև կանխիկացնել հաշվին առկա միջոցները (կամ դրանց մի մասը):

Բանկումատ – սարք, որի միջոցով հնարավոր է գումար կանխիկացնել կամ կատարել այլ գործարքներ :

Կարևոր է, որ սովորողն իմանա ՀՀ մետաղադրամները, թղթադրամները և կարողանա կատարել համեմատություններ՝ կիրառելով դրանք :

Անհրաժեշտ է , որ սովորողը յուրաքանչյուր թեմայի շրջանակում յուրացնի ֆինանսական կոմպետենցիաները :

Պակաս կարևորություն չունի նաև ապրանք, ապրանքի արժեք, գին, ֆինանսական կոմպետենցիաներ, ինչպես նաև կարիք, ցանկություն, խնայողություն :

Կարծում եմ, որ դպրոցական տարիներից երեխաների մոտ պետք է ձևավորվի գնումներ կատարելու մշակույթը, հասկանա ինչն^օ ինայել , ինչպե՞ս ինայել, որովհետև այսօրվա դպրոցական տղաներն ու աղջիկները վաղվա ընտանիքի հայրերն ու մայրերն են :

Այսօրվա սովորողը պետք է իմանա նաև, որ տարբեր երկրներ ունեն տարբեր դրամական միավորներ, որ յուրաքանչյուր արժույթ այլ երկրներում ունի իր գինը, որը կարող է փոփոխվել ժամանակի ընթացքում, և , որ դրամական փոխանակումները իրականացվում են համապատասխան ֆինանսական կազմակերպություններում : Կարծում եմ, որ սովորողները պետք է կարողանան ճանաչել տարբեր երկրների դրամական միավորները :

Մաթեմատիկայի ուսուցչի նպատակը պետք է լինեն նաև համեմատականությունների միջոցով տարբեր երկրների դրամական միավորների փոփոխությունները գնահատելու և արդյունավետ որոշումներ կայացնելու կարողություններ սերմանելու սովորողների մեջ :

Ժամանակակից կյանքում անհնար է պատկերացնել առանց <<ավանդ>> և <<վարկ>> հասկացությունների :

Տոկոսագումար – դրամական արտահայտությամբ այն գումարը, որը հավելյալ վճարվում է վարկի դիմաց կամ ստացվում է ավանդի դիմաց : Տոկոսագումարը հաշվարկվում են վարկի դիմաց վճարվող տոկոսագումարներով :

Վարկ – վարկը պայմանավորվածություն է բանկի, վարկային կազմակերպության կամ գրավատան և ձեր միջև , որի համաձայն, այդ պահին ստանում եք դրամական միջոցներ / ապրանք / ծառայություն՝ հետագայում վճարելու նախապայմանով : Վարկի մայր գումարի հետ հիմնականում վճարում եք նաև տոկոսագումարներ (այսպես կոչված՝ տոկոս):

Ավանդ – գումար, որը Դուք ներդնում եք բանկում, իսկ բանկը պարտավորվում է վերադարձնել ներդրված գումարը և պայմանագրով նախատեսված կարգով և պայմաններով դրա դիմաց վճարել տոկոսներ :

Քարտային հաշիվ - ընթացիկ բանկային հաշվի տեսակ է, որին կցված է վճարային քարտ : Քարտային հաշվի միջոցով կարելի է իրականացնել բոլոր տեսակի ընթացիկ ֆինանսական գործառույթները՝ այնպես, ինչպես ընթացիկ հաշվի միջոցով , սակայն ոչ թե բանկին համապատասխան վճարման հանձնարարակներ տալով, այլ օգտագործելով ձեր քարտը :

Շահույթ – տվյալ ժամանակահատվածում բիզնեսի ստացած հասույթի և կատարած ծախսերի տարբերությունն է :

Եկամտաբերություն - ներդրման դիմաց ստացվող եկամուտն է՝ արտահայտված տոկոսով :

Ռիսկ – մարդու կամքից անկախ գոյություն ունեցող փաստ, որը կապվում է տեղի ունեցող իրադարձության անորոշ հետևանքների, արդյունքների հետ :

Ռիսկայնություն – ռիսկի ի հայտ գալու հավանականությունը : Սովորաբար որքան ավելի բարձր է ներդրման եկամտաբերությունը, այնքան այն ավելի ռիսկային է :

Սովորողը պետք է իմանա, որ ավանդի և վարկի վրա կիրառվող տոկոսադրույթները կարող են արտահայտվել բարդ տոկոսով :

Մաթեմատիկայի դասերին իմ նպատակներից է նաև, որ սովորողներն իմանան թե ինչպես է հաշվարկվում ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը և վարկի փաստացի տոկոսադրույթը : Իմանա , որ խնայողությունների դեպքում եկամտաբերությունից բացի կարևոր են նաև ռիսկայնությունը : Գիտակցի, որ փողը և տոկոսադրույթների վերաբերյալ ընդունված ոչ խելամիտ որոշումները կարող են

հանգեցնել խնդիրների, որոնք բարդ տոկոսների դեպքում կարող են արագ դուրս գալ վերահսկողությունից, կարևորի առավել բարձր տարեկան տոկոսային եկամտաբերու – թյամբ խնայողության և առավել ցածր փաստացի տոկոսադրույքով վարկի ընտրությունը :

Այդ նպատակով կարելի է մաթեմատիկայի դասերի ընթացքում լուծել և քննարկել ոչ միայն դասագրքերում զետեղված համապատասխան խնդիրները, այլ նաև լրացուցիչ ձեռնարկներից : Կարելի է խնդիրներ լուծել, խմբային աշխատանքներ , գործ – նական և նախագծային աշխատանքներ կատարել :

Խնդիր 1 (վարկ) Աշակերտի ծնողները վերցրել են 10 մլն. Դրամ վարկ՝ 16 % տարեկան տոկոսադրույքով և 5 տարի ժամկետով : Յուրաքանչյուր տարվա ավարտին վարկի գումարին ավելանում է նաև նրա տոկոսը, իսկ վարկը մարվում է ժամկետի վերջում : Որքա՞ն գումար պետք է ընտանիքը վճարի :

Լուծում

Յուրաքանչյուր տարվա ավարտին պարտքը կավելանա 16 %-ով , այսինքն՝ 1.16 անգամ : Հետևաբար՝ մի տարի հետո կդառնա $10000000 \cdot 1.16$, երկու տարի հետո՝ $10000000 \cdot 1.16^2$, հինգ տարի հետո՝ $10000000 \cdot 1.16^5 = 21003415$:

Պատ.՝ 21003415 դ. :

Խնդիր 2 (ավանդ) Նարեն իր խնայած 4 միլիոն դրամը որպես երկարաժամկետ ավանդ ներդրել է բանկ՝ տարեկան 10 % տոկոսադրույքով : Հայտնի է, որ յուրաքանչյուր տարվա ավարտին ավանդի գումարին ավելանում է նաև նրա տոկոսը (կապիտալացվում է) : Որքա՞ն կդառնա Նարեի գումարը 8 տարի հետո :

Լուծում

Յուրաքանչյուր տարվա ավարտին ավանդը կավելանա 10 %-ով, այսինքն՝ 1.1 անգամ : Հետևաբար, մի տարի հետո կդառնա $4000000 \cdot 1.1$, երկու տարի հետո $4000000 \cdot 1.1^2$, իսկ ութ տարի հետո $4000000 \cdot 1.1^8 \approx 8574355$

Պատ.՝ 8574355 դ. :

Խնդիր 3 (գնաճ) Ընտանիքում ներկայումս սննդի, հագուստի և այլ կենցաղային նպատակների համար կատարվող ընթացիկ ծախսերը կազմում են միջինում ամսական 160 000 դրամ : Գանխատեսվում է, որ հաջորդող տարիներին գնաճը տարեկան կլինի 4.5 % : Գնաճի հետևանքով միջինում որքա՞ն կդառնա ընտանիքի ամսական սպառումը՝ ա) 1 տարի հետո, բ) 2 տարի հետո, գ) 4 տարի հետո :

Լուծում

Ընտանիքի ամսական սպառումը՝

ա) մեկ տարի հետո կլինի՝ $160000 \cdot (1 + 4.5 / 100) = 167200$ դրամ :

բ) երկու տարի հետո կլինի՝ $160000 \cdot (1 + 4.5 / 100)^2 = 174724$ դրամ :

գ) չորս տարի հետո կլինի՝ $160000 \cdot (1 + 4.5 / 100)^4 = 190802.96$ դրամ :

Պատ.՝ 167200 դ., 174724 դ., 190803 դ. :

Խնդիր 4 (վարկ) Երիտասարդ գիտնականի ընտանիքը վերցրել է վարկ՝ 10 մլն դրամ՝ 10 % տարեկան տոկոսադրույքով և 10 տարի մարման ժամկետով : Որքա՞ն գումար պետք է ընտանիքը տարեկան վճարի բանկին, եթե, ըստ պայմանի, բոլոր տարիների վճարած գումարները պետք է միմյանց հավասար լինեն :

Լուծում

Դիցուք՝ յուրաքանչյուր տարի պետք է վճարել s դրամ : Նկատենք, որ ամեն տարի պարտքը մեծանում է 10 % - ով, այսինքն՝ ավելանում է 1.1 անգամ, իսկ այնուհետև պակասում է s դրամով : Այսպիսով՝ առաջին տարվա ավարտին պարտքը կդառնա $10000000 \cdot 1.1 - s$:

Երկրորդ տարվա ավարտին $(10000000 \cdot 1.1 - s) \cdot 1.1 - s = 10000000 \cdot 1.1^2 - s(1.1 + 1)$:

Երրորդ տարվա ավարտին՝

$(10000000 \cdot 1.1^2 - s(1.1 + 1)) \cdot 1.1 - s = 10000000 \cdot 1.1^3 - s(1.1^2 + 1.1 + 1)$:

Համանման հաշվարկով կստանանք, որ 10-րդ տարվա ավարտին պարտքը կլինի՝ $10000000 \cdot 1.1^{10} - s(1.1^9 + 1.1^8 + \dots + 1.1 + 1) = 0$

Փակագծում գրվածը երկրաչափական պրոգրեսիայի գումար է ($p_1 = 1, q = 1.1, n = 10$) :

Հետևաբար՝ $10000000 \cdot 1.1^{10} - s \cdot 1.1^{10} / 1.1 - 1$: Տեղադրելով $1.1^{10} \approx 2.5937425$, կստանանք՝

$s \approx 1627500$:

Պատ.՝ 1627500 դ. :

Խնդիր 5 (վարկ) Բանկը տրամադրում է հիփոթեքային վարկ՝ բնակարան գնելու համար, 10 տարի մարման ժամկետով : Տարեկան տոկոսադրույքը կազմում է 15 % : Վարկի պայմանների համաձայն, առաջին տարում վարկառուն վճարում է վարկային գումարի 0.1 մասը և 15 % - ը ամբողջ վարկային գումարից : Երկրորդ տարում վարկառուն վճարում է վարկի գումարի 0.1 մասը և ամբողջ վարկային գումարի 0.9-ի 15 % -ը և այդպես շարունակ : Քանի՞ անգամ է վարկառուն վճարվելիք գումարը մեծ պարտք վերցված գումարից, եթե պայմանագրի համաձայն՝ ժամկետից շուտ մարում չի

թույլատրվում :

Լուծում

Ենթադրենք վարկը կազմում է x դրամ : Առաջին տարում վարկառուն պետք է վճարի $0.1x + x \cdot 15 / 100$ դրամ : Երկրորդ տարում՝ $0.1x + 0.9x + 15 / 100$ դրամ, իսկ երրորդ տարում՝ $0.1x + 0.8x + 15 / 100$ դրամ և այլն : Տասը տարվա արդյունքում վարկառուն վճարում է

$$10 \cdot 0.1x + 0.15 \cdot (x + 0.9x + 0.8x + 0.7x + 0.6x + 0.5x + 0.4x + 0.3x + 0.2x + 0.1x) \\ = x + 0.15 \cdot 5.5x = 1.825x$$

Ստացվում է, որ վարկառուն պարտք վերցրած գումարից 1.825 անգամ շատ գումար է վճարում :

Պատ.՝ 1.825

Ներկայացնում եմ նաև նախագծային աշխատանքի մի օրինակ, որին նման նախագծային աշխատանքներ կարելի է կատարել մաթեմատիկայի դասերի ընթացքում տարբեր թեմաներով :

Նախագծային աշխատանք – Սովորողներին բաժանել խմբերի և ներկայացնել աշխատանքի պահանջները, պայմանները, կատարման ժամկետը և հաշվետվություն հանձնելու ձևը : Թեման՝ վարկեր :

Հանձնարարություն. Յուրաքանչյուր խմբին տրվում է հանձնարարություն՝ վերցնել մինևս չափով վարկ : (Բոլոր պահանջները հնարավոր է կատարել՝ օգտվելով www.abcfinance.am կայքի) .

1. Ձևակերպել, թե ինչի համար եք ցանկանում վարկ վերցնել : (Այստեղ ենթադրվում է, որ արդեն իրականացվել է բյուջեի / եկամուտների, ծախսերի/ պլանավորում՝ որոշակիացնելու համար այն առավելագույն գումարը, որ ամեն ամիս կարող եք տրամադրել վարկի մարմանը) :

Նշել նաև, որ վարկի տոկոսավճարները ամսական մարման մեծությունը չի գերազանցում խմբի ամսական եկամտի 30 – 40 %-ը:

2. Շուկայի ուսումնասիրություն (Տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ յուրաքանչյուր խմբին առաջարկել հետազոտել 2-4 բանկ կամ վարկային կազմակերպություն, ընտրել այն բանկը, որը ամենալավ պայմաններ է առաջարկում : Բանկերի ընտրությունը համաձայնեցնել ուսուցչի հետ՝ կրկնությունից) խուսափելու համար: Համեմատություններ կատարելիս ուշադրու-

թյուն դարձնել վարկի տրամադրման բոլոր պայմաններին.

- Որքան է վարկի դիմաց առաջարկվող անվանական տոկոսադրույքը և տարեկան փաստացի տոկոսադրույքը :

- Որո՞նք են տարեկան փաստացի տոկոսադրույքի մեջ չընդգրկվող ծախսերը :

- Վարկի տոկոսադրույքը կիրառվում է մա՞յր գումարի, թե՞ նվազող մնացորդի նկատմամբ :

- Ի՞նչ տարբերակով է մարվում վարկը (մարվում է վարկի տևողության ընթացքում, թե՛ ժամկետի վերջում) :

- Վարկի մարումների ի՞նչ ժամանակացույց է ընտրված :

- Վարկի մարման ի՞նչ ժամկետ է նախատեսված :

- Ի՞նչ եղանակով է տրամադրվում վարկը (կանխիկ, անկանխիկ) :

Աշխատանքը ավարտին հասցնելու համար այս բոլոր ուսումնասիրություններից հետո պետք է կատարեն անհրաժեշտ հաշվարկներ և կայացնեն խելամիտ և հիմնավորված որոշում :

Հաշվետվություն. Ուսուցչին ներկայացվում է թվարկված բոլոր կետերը բավարարող պատասխաններով, լրացված աղյուսակով և կատարված հաշվարկներով փաթեթ :

Վերլուծություն, անդրադարձ. Ուսուցիչը ուսումնասիրում է բոլոր խմբերի աշխատանքները, բոլոր խմբերի հետ միասին կազմակերպվում է քննարկում և հետազոտված բոլոր վարկային կազմակերպություններից ընտրվում է մեկը :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտական աշխատանքիս նպատակն էր, բացահայտել ֆինանսական կրթության արդիական լինելը, կարևորությունը և կարծում եմ, որ այն պետք է ինտեգրված լինի մաթեմատիկայի դասընթացում և ուրեմն, ֆինանսական գիտելիքի , հմտության և վերաբերմունքի ձևավորման խնդիրը պետք է դիտարկել մաթեմատիկական նյութի բովանդակության հետ ներդաշնակեցված՝ ինտեգրման սկզբունքներին համապատասխան :

Եվ առաջարկում եմ հնարավորության դեպքում հատուկ ժամաքանակ տրամադրել ֆինանսական կրթությանը, որի հիմնական նպատակը կլինի ֆինանսապես գրագետ անձի ձևավորմանը, ով ունի այնպիսի գիտելիքներ, հմտություններ, վերաբերմունք ու վարքագիծ, որոնք նրան հնարավորություն են տալիս լինելու տեղեկացված, իր անձնական ֆինանսների վերաբերյալ կայացնելու պատասխանատու որոշումներ և ձեռնարկելու իրավիճակին համապատասխան ճիշտ գործողություններ :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հակոբյան Ս. Է., Փոքրիկյան Ա. Լ., Ղազարյան Շ., Մ., Ֆինանսական կրթության առարկայական չափորոշիչ և ծրագիր «Մաթեմատիկա» և «Հանրահաշիվ» առարկաների համար, Երևան, 2018 :
2. Հակոբյան Ս. Է., Փոքրիկյան Ա. Լ., Ղազարյան Շ., Մ., Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ «Մաթեմատիկա» և «Հանրահաշիվ» առարկաների ուսուցիչների համար, Երևան, 2019 :
3. Վարդանյան Շ., Խմբային հետազոտություն «Վարկեր» թեմայով, Մաթեմատիկան դպրոցում, հ. 3, Երևան, 2016 :
4. ՖԿԱՌ մշակման և իրագործման հանձնաժողով, ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարություն, Երևան, 2014 :